ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14» . Դեկտեմբերի 2017թ.-ի N 32

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՉՈՐՍ ՄԻԱՎՈՐ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԻ «ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔ ՀԱՄԱՅՆՔ ԱՐՈՏՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄ» ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԿՈՈՊԵՐԱՏԻՎԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գեղարքունիք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող չորս միավոր հիմնական միջոցները ավելի արդյունավետ օգտագործման նպատակով, ղեկավարվելով ՏԻՄ ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, համայնքի ավագանին որոշեց.

Ո Ր Ո Շ Ե Ց

Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի առաջարկությանը՝

1. ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող չորս միավոր հիմնական միջոցները՝ ՀԿ-5 հացահատիկահավաք կոմբայնը և իր կայանատեղին, 6,5 կվ հզորությամբ հոսանքի գեներատորը և եռակցման սարքը հանձնել Գեղարքունիք համայնքի «Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին՝ անհատույց շահագործման իրավունքով:
2. Չորս միավոր հիմնական միջոցները «Գեղարքունիք համայնքի արոտօգտագործողների միավորում» սպառողական կոոպերատիվին տրամադրելու համար ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել գույքի անհատույց օգտագործման տրամադրման պայմանագիր:
3. Համայնքի ղեկավարին ստեղծել հանձնաժողով հիմնական միջոցների հանձնման – ընդունման գործընթացը կազմակերպելու համար:
4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ավագանի՝

7 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայներով

19.12.2017

X

Գեղարքունիք համայնքի ղեկավար՝ Կ. Ասատրյան

Կ.Տ